

ԱՇԽԱՐՀԱՀԱՆԴԻՍԻՆ ՓԱԿՈՒՄՆ

Նոյեմբեր վեցին տրուելիք վերջնական հանդէսք և լուսաւորութիւնք ուր ուրեմն կ'աւետէին աշխարհահանդիսին փակման հետ, ևս և Փարիզու ողեսպառ շարժման և գործունէութեան մը գադարումը ։ Այն անհամար բազմութիւնն որ 'ի չորից ծագաց աշխարհի գիմեր էր աստ և յանախ այցելած էր Արիստոն դաշտին, միւսանգամ կու գար վերջին օրս այս արուեստից և զիտութեանց յանկարծածագ քաղաքս : Վերջին յարգադիր ողջնը տալու, թերեւ և նոր բան մը սեսնելու համար ալ : Հետաքրքրական տեսարան մը պիտի ըլլոր այս քան բազմութիւն 'ի մի վայր հաւաքեալ տեսնելը : Ժամը չորս ու կէսի մօտ է, երբ մեր գիտավայրը կ'ընտրենք էյֆէլի աշտարակին առաջին յարկն :

Արևն իւր վերջին ոսկեթելքն կը սփռէ հորիզոնին վրայ . գիշերոյ ցրտին քողն հետզհետէ կը ծածկէ Փարիզու շրջակայից գեղանկար կետրոնին, և ազգարար նշանն արդէն իմացուցած է աշխարհահանդիսին այցելուացն՝ սրահից և ճեմելեաց փակուիլը . այն ատեն ամենայն ոք 'ի պարտէցն կը զիմէ, լուսավառութեան ներկայ գտնուելու համար, Ամէն գոներէ ելլոր բազմութիւնն ոչ թէ գունդը կամ բանակներ են, այլ հեղեղ մը մարդկութեան՝ որ ալեաց պէս իրարու յաջորդելով և մկելով՝ խիտ և հոծ կը ցրուի պարտիզին ուղեաց և հրապարակներուն մէջ, և զայն բաւական չգտնելով կը տարածուին դալարագեղ խոտոց վրայ . Այլ մինչդեռ քաղաքն 'ի մժութեան կը թաքչի, Արիստոն գաշտը կը սկսի լուսաւորուիլ . նախ կեդրոնական ծածարն է, որ իւր նրբագիծ ճարտարապետութիւնը կանխեղօք և եւեկորական լուսով կը զծէ 'ի խորամմժան երկնից . ապա կողմնակի թեկերն՝ Գեղարուեստից և Ազատական արուեստից տաճարըն, իրենց գունոց ներդաշնակութիւնն կը խտոնեն համատեսիլ վառարանիս մէջ . մինչդեռ իրենց հակապատկեր թրօքատէրն իւր կիսաբոր եւ առակարգ սիւնազարդ ամփիթէատրոնն իւր ստորակայ ջրվէժովն կը լուսաւորուի . և երբ աստ և անդ՝ փքք այլ փառացի պալատքն իրենց գոթական լուսազարդ պատկերն, և վենեցուելայի առանձնացեալ պալատն իւր գոյնագոյն ապակեղարդ որմովքն՝ մէջէն ելեկտրական լուսով լուսաւորուած իրքն օգեղէն գղեկիկ մժութեան մէջ յանկարծ ծագին, և միւսանան մաւրիտանացի ու գունիսեան կամարակապ ճեմելեաց՝ արևելեան թրթուուն համաստեղաց պէս ցոլացող կանթեղաց հետ, յայնժամ առ վայր մի կը յափշտակուիս հիացեալ ակնարկ մը ձգելով այս մոգական տեսարանիս վրայ . Սակայն բան մը կը պակսի դեռ ես . կարծես անկենդան նկար մ'է, որ մի միայն այն ատեն իւր բավանդակ գեղեցկութիւնը կը ստանայ, երբ

լրիկ աւազանքն սկսին կենդանանալ: Յայնժամ երփներփեան ցայտը և խաղք ջրոց իրարու հետ խառնելով, ոսկւոյ, արծաթոյ և ականց անձրեւ կը հոսեն, որ միշտ նորանոր գուներով իրարու կը յաջորդեն, մինչդեռ անդիէն էյֆէլի աշտարակն ստէպ'ի վարդեգոյն սիւն մի կը փոխուի, և կը լրացունէ այդ տեսարանն՝ որ եզակի և աննման է իւր տեսակին մէջ: Այս տեսարանն կը տեէ մինչև որ թնդանօթի մը հարուածը ցուցահանդիսին վերջին ժամը նշանակէ և վեց ամսոյ փառաւութեանց երազի պէս սահին իմացունէ: կան յաճախ տեսարանք զորս կարելի չէ հաւատարմաբար նկարագրել:

Երկրորդ օրն Արխեան դաշտն աւերմանն կործանման ընդարձակ հրապարակ մ'էր: Զինուորականաց, Մաճառաց և արենելեայց գեղեցիկ ներդաշնակութեանն յաջորդեր էր մինոց և գործեաց անհանոյ հնչիւնն: և այցելու բազմութիւնն տեղի տուեր էր գործաւորաց խմբերու և սայլորդաց, որ հապճեպ կը տանէին իրենց տեղը վերադառնալուն անհամբեր հանդիսացրաց նիւթքը և արարքը: Զարդարանաց բոյսը և տունկը վերցուեր էին արդէն, և պարտիզաց մէջ ծառերէն առկախ լապտերն գեռ ևս կ'ողբային երեկուան պայծառութիւնն:

Այլ մինչդեռ աշխարհահանդէսն ժամէ ՚ի ժամ կ'աւերուէր, անզիէն ամէն օրագիրը իրարու հետ կը մրցէին շինեալ ցուցահանդիսին և իւր ունեցած յաջորդութեան վրայ ներբողներ յօրինելու: Ամէնքը կը խորհրդածէին պանծալով անոր Գաղղիոյ բերած փառաց և պարծանաց վրայ: Մին կ'ըսէր: Մեր ըրած աշխատութիւնն տեսնելով եւրոպա՝ մեծ գաղափար մը ունեցաւ խաղաղութենէ յառաջ եկած բարութեանց վրայ, և վստահացաւ ալ միանգամայն որ մենք զայն վրդովել չենք ուզեր: Մեր ցուցահանդէսն յայսնի և բացարձակ պատասխան մ'եղաւ անոնց օրոնք կ'ամբաստանէին զգաղղիա, եթէ միշտ պատրաստ է աշխարհիս խաղաղութիւնը վրդովելու: Ուրիշ մը: Օտարականաց մեզի ձգած ստակէն աւելի թանկագին է մեզի անոնց մեր վրայ ստացած համարութիւն: Հիմա ստոյդ գիտեն ամենքը թէ ինչ որ ըսուեցաւ Գաղղիոյ և իւր Հասարակապետութեան դէմ ստութիւն ու ամբաստանութիւն է միայն: Ուրիշ մը: Այս հետեւանքը պէտք է հանել երեկուան հանդէսներէն վերը, թէ այս մեր երկիրն զարմանալի և բեղմաւոր երկիր մ'է, որ առանց նեղութեան պիտի ստանայ գարձեալ իւր գերազանցութիւնն այն օր, որ իւր քաղաքականութիւնն դադարելու ըլլայ զի՞քը պառակտելէն: Եթէ այն մարդիկ՝ որ այսօր մեր ապագայն ձեռքբերնին ունին, և եթէ պահպանողականք՝ որ ՚ի զուր կը պատերազմին այսօր՝ կարենային այս ճշմարտութեան ազէկ խելամուտ ըլլալ: գիւրին պիտի ըլլար մեզի մեր սահմանադրական ասպարիզին մէջ իրարու հետ հաշտուիլ: Ուրիշ մը: Քաղաքական տեսակէտով աշխարհահանդէսն մեծ արդիւնք ունեցաւ եթէ ՚ի

Ներքս երկրին և եթէ արտաքրոյ . մեր գաւառացեաց առջև Փարփակ քա-
ղաքը գործունեայ փեթակի գաղափարն տուաւ , յորում արուեստք
և զիտութիւնք՝ անման պայծառութեամբ փայլեցան , իսկ օտարաց
առջեւ Գաղղիա իրենց ներկայացաւ իւր ազգային մեծ յատկու-
թիւններովն այսինքն է . բարեկիրթ հիւրասիրութեամբ , կարգաւորու-
թեամբն և ազատամոռութեամբն : Ուրիշ մը . Մեր երկրին ունեցած
վարկին և համազգսյին յարաբերութեանց տեսակէտովն աշխարհա-
հանդէսն մեծամեծ ծառայութիւններ մատոյց , արդարացնելով
զմեղ այն սիսալ գաղափարներէն , որ կամ տգիտութեամբն կամ չա-
րակամութեամբ եւրոպական հասարակութեանց մէջ տարածել ջա-
նացած են մեր դէմ : Ուրիշ մը . Մէջմը իրենց տեղն վերադարձած՝ ա-
նոնք որ մեր գործոցն ականատես եղան՝ կրնան մեղ՚ի նպաստ վկա-
յել անիրաւ կասկածներու և հնացեալ ոխակալութեանց դէմ : պի-
տի ուղղեն շատ մը մոլար կարծիքներ որ տգիտութենէն աւելի նա-
խանձու ոգւով մեր վրայ տարածուած են , և մեզ համակրութիւնն
շատցունել : Ուրիշ մը . Օտարականն տեսաւ որ մեր արտաքր կարգի
ծանրակշիռ քաղաքական պարագայից հետ , և մեր ընտանի երկառ-
ուակութեամբք հանդերձ , Գաղղիա գիտոցաւ երբ ուղեց՝ միութեան և
հաշտութեան օրինակ տալ : Աշ մի ժամ հասարակաց խաղաղութիւնն
վրդովեցաւ , ոչ մի օր աշխարհահանդիսին ևս քան զիս աճող յաջո-
ղակութիւնն ՚ի վտանգի դրուեցաւ : Մեր մրցակիցքն , նյոն իսկ մեր
հակառակորդքն՝ որոնք կանխակալ կարծեազ և ծուռ կարծիքներով
մեզի եկան , հարկադրուեցան զինաթափ ըլլալ տեսարանի մառջն՝
որ զիրենք զարմացնելու համար պատրաստուած էր : Ի վերջոյ կ'ըսէր
ծանրակշիռ օրագիր մը . Աշխարհահանդէսն փակուեցաւ , մեծ և օ-
րինաւոր յաջողութիւն մը ստանալէ յետոյ , որուն վրայ ոչ ոք այն-
քան ուրախացաւ՝ որչափ մենք . որովհետեւ այս յաջողութիւնն ոչ
թէ մի կողմակցութեան՝ այլ բովանդակ Գաղղիոյ և իւր արուեստա-
կան հարտար հանճարոյն էր :

Հ . ԳԵՐՐԻ ՊԱՏԵԱՆ

